

Գլուխ V

Մենք կվերցնենք եռաչափ տիեզերքը և կդիտարկենք աշխարհը որպես *մատերիայի* և *ուժի* աշխարհ՝ բառի ամենատարրական և ամենահասարակ իմաստով: Մատերիային, տարածությանը ու ժամանակին վերաբերող ավելի բարձր չափումներին և նոր տեսություններին, ինչպես նաև գիտությանն անհայտ աշխարհի մասին գիտելիքների այլ կատեգորիաներին մենք կանդրադառնանք ավելի ուշ: Այս պահին անհրաժեշտ է ներկայացնել տիեզերքը «արարման ճառագայթի» գծապատկերային ձևով՝ սկսած Բացարձակից մինչև Լուսինը:

- ԲԱՑԱՐՁԱԿԸ
- ԲՈԼՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐԸ
- ԲՈԼՈՐ ԱՐԵՎՆԵՐԸ
- ԱՐԵՎԸ
- ԲՈԼՈՐ ՄՈԼՈՐԱԿՆԵՐԸ
- ԵՐԿԻՐ ՄՈԼՈՐԱԿԸ
- ԼՈՒՍԻՆԸ

Պատկեր 3

«Արարման ճառագայթը» առաջին հայացքից տիեզերքի շատ պարզունակ գծապատկերի տպավորություն է թողնում, սակայն իրականում լրացուցիչ ուսումնասիրությունների հետևանքով, հասկանալի է դառնում, որ այս հասարակ գծապատկերի օգնությամբ հնարավոր է համաձայնության բերել և մեկ ամբողջություն դարձնել աշխարհի մասին մի շարք հակասական փիլիսոփայական, ինչպես նաև կրոնական և գիտական հայացքներ: Արարման ճառագայթի գաղափարը պատկանում է հնագույն գիտելիքներին, սակայն մեզ հայտնի միամիտ գեոցենտրիստ տիեզերական համակարգերից շատերը տալիս են այդ գաղափարի անձեռնհաս բացատրություններ կամ աղավաղում են այն՝ տառացի ընկալման հետևանքով:

Անհրաժեշտ է նկատել, որ արարման ճառագայթի գաղափարը և այն, որ դա առաջացել է Բացարձակից, հակասում է ժամանակակից տեսություններից մի քանիսին, որոնք իրականում գիտական հայացքներ չեն: Եկեք համար դիտարկենք, օրինակ, Արև-Երկիր մոլորակ-Լուսին փուլը: Համընդհանուր պատկերացումների համաձայն, Լուսինը սառը, անկենդան երկնային մարմին է, որը ժամանակին նման է եղել Երկիր մոլորակին, այսինքն՝ պարունակել է ներքին տաքություն, իսկ ավելի վաղ շրջանում Արեգակի պես հալված մի զանգված է իրենից ներկայացրել: Համընդհանուր տեսությունների համաձայն, Երկիր մոլորակը նման է եղել Արեգակին և աստիճանաբար սառչելով՝ այն ուշ թե շուտ վերածվելու է Լուսնի պես մի սառած զանգվածի: Սովորաբար ընդունված է ենթադրել, որ Արևը նույնպես

սառչում է և որ ժամանակի ընթացքում այն նմանվելու է Երկիր մոլորակին, իսկ ավելի ուշ՝ Լուսնին:

Առաջին հերթին՝ անհրաժեշտ է նշել, իհարկե, որ այս տեսանկյունը չի կարելի «գիտական» համարել, բառի բուն իմաստով, քանի որ գիտության մեջ, այսինքն՝ աստղագիտության ոլորտում, կամ ավելի ճիշտ՝ աստղաֆիզիկայում այս թեմայի շուրջ գոյություն ունեն մի շարք հակասական վարկածներ և տեսություններ, որոնցից ոչ մեկը չունի լուրջ հիմնավորում: Սակայն այս տեսակետը ամենատարածվածը լինելով դարձել է ժամանակակից միջակ մարդու մի տեսակետ, որ վերաբերում է այն աշխարհին, որտեղ մենք ապրում ենք:

Արարման ճառագայթի գաղափարը և դրա առաջացումը Բացարձակից հակասում է մեր օրերի ընդհանուր հայացքներին:

Համաձայն այդ գաղափարի՝ Լուսինը դեռևս չծնված մոլորակ է, որն այլ կերպ ասած՝ արարման ընթացքում է: Այն աստիճանաբար տաքանում է և ժամանակի ընթացքում (արարման ճառագայթի զարգացման բարենպաստ պայմանների դեպքում) կնմանվի Երկիր մոլորակին և ձեռք կբերի իր առանձին արբանյակը՝ մի նոր Լուսին: Արարման ճառագայթի մի նոր հանգույց կավելանա: Երկիր մոլորակը չի սառչում, այլ նույնպես տաքանում է և ժամանակի ընթացքում կարող է նմանվել Արեգակին: Մենք կարող ենք նման գործընթաց նկատել Յուպիտերի համակարգում, որն իր արբանյակների համար որպես արև է հանդես գալիս:

Ամփոփելով այն ամենն ինչ արդեն ասվել է արարման ճառագայթի մասին՝ սկսած աշխարհ 1-ից մինչև աշխարհ 96-ը, անհրաժեշտ է ավելացնել, որ այն թվերը որոնցով համարակալվել են աշխարհները, մատնանշում են ուժերի քանակը կամ այն օրենքները, որոնցով առաջնորդվում են տվյալ աշխարհները: Բացարձակում գոյություն ունի ընդամենը մեկ ուժ և միայն մեկ օրենք՝ Բացարձակի եզակի և անկախ կամքը: Հաջորդող աշխարհում գոյություն ունի երեք ուժ կամ երեք օրենքների դաս: Մյուսում կա օրենքների վեց դաս, իսկ դրան հաջորդող աշխարհում՝ տասներկու և այլն: Մեր աշխարհում, այսինքն՝ Երկիր մոլորակի վրա, գործում են քառասանութ օրենքներ, որոնց ենթարկվում ենք մենք և որոնք կառավարում են մեր ողջ կյանքը: Եթե մենք Լուսնի վրա ապրելիս լինեինք, ապա ենթակա կլինեինք ինսունվեց օրենքների, ինչը կնշանակեր, որ մեր կյանքը և գործունեությունն առավել մեխանիկական կլինեին, և մենք հնարավորություն չէինք ունենա ազատվելու ներկայումս մեզ բնորոշ մեխանիկականությունից:

Ինչպես արդեն ասվել է, Բացարձակի կամքն իր դրսևորումն է գտնում միայն անմիջական աշխարհում, որը ձևավորվել է հենց իր ներսում, այսինքն՝ աշխարհ 3-ում: Բացարձակի անմիջական կամքը աշխարհ 6 չի հասնում և դրսևորվում է դրանում միայն մեխանիկական օրենքների տեսքով: Այնուհետև 12, 24, 48 և 96 աշխարհներում Բացարձակն իրեն դրսևորելու ավելի ու ավելի քիչ հնարավորություն է ստանում: Սա նշանակում է, որ աշխարհ 3-ում Բացարձակը, կարծես, ողջ տիեզերքի համընդհանուր ծրագիր է կազմում, որը հետագայում մեխանիկորեն է զարգանում: Բացարձակի կամքը հաջորդող աշխարհներում այս ծրագրից դուրս չի

կարող դրսևորվել, և այս ծրագրի համաձայն, այն մեխանիկական օրենքների տեսքով է հանդես գալիս: Սա նշանակում է, որ եթե Բացարձակը որոշեր իր կամքը դրսևորել, ասենք, մեր աշխարհում՝ հակառակ դրանում գործող մեխանիկական օրենքների, ապա նա ստիպված կլիներ ոչնչացնել բոլոր այն միջակա աշխարհները, որ գտնվում են նրա և մեր աշխարհի միջև:

Հրաշքի գաղափարը, որպես իրենց արարած կամքի կողմից ստեղծված օրենքների խախտում, ոչ միայն հակասում է առողջ բանականությանը, այլ կամքի գաղափարին ընդհանրապես: «Հրաշքը» միայն այն օրենքների դրսևորումն է, որ հայտնի չեն մարդուն կամ շատ հազվադեպ երևույթներ են: «Հրաշքը» այս աշխարհում այլ աշխարհների օրենքների դրսևորումն է:

Երկիր մոլորակի վրա մենք շատ հեռու ենք գտնվում Բացարձակի կամքից. մենք առանձնացված ենք դրանից 48 մեխանիկական օրենքներով: Եթե մենք կարողանայինք ազատվել այս օրենքների կեսից, մենք ենթակա կլինեինք ընդամենը քսանչորս օրենքներին, այսինքն՝ մոլորակների աշխարհի օրենքներին. հետևաբար մի փուլ ավելի մոտ կլինեինք Բացարձակին և նրա կամքին: Եթե այնուհետև մենք կարողանայինք ազատվել այս օրենքների մի մասից, ապա կենթարկվեինք Արեգակի օրենքներին (տասներկու օրենքներին), հետևաբար մեկ փուլ ավելի մոտ կգտնվեինք Բացարձակին: Եթե կրկին ազատվեինք այս օրենքների կեսից, ապա կենթարկվեինք աստղերի աշխարհի օրենքներին, և մեզ միայն մեկ փուլ կբաժաներ Բացարձակի անմիջական կամքից:

Այսպիսով, մարդը հնարավորություն ունի աստիճանաբար ձերբազատվելու մեխանիկական օրենքներից:

Քառասունութ օրենքների ուսումնասիրությունը, որին ենթակա է մարդը, չի կարող լինել վերացական, ինչպիսին աստղագիտությունն է: Մարդն այս օրենքները կարող է ուսումնասիրել միմիայն իր ներսում և *դրանցից ազատվելով*: Սկզբում մարդը պետք է հասկանա, որ նա առանց որևէ անհրաժեշտության ենթակա է հազարավոր աննշան, սակայն տաղտկալի օրենքների, որոնք ստեղծվել են ուրիշ մարդկանց և հենց իր կողմից: Երբ նա փորձի ազատվել դրանցից, նա կնկատի որ չի կարողանում: Դրանցից ազատվելու երկարատև և համառ փորձերը կզան համոզելու նրան, որ նա ստրկության մեջ է գտնվում: Օրենքները, որոնց ենթակա է մարդը, միայն հնարավոր է ուսումնասիրել դրանց դեմ պայքարելու, դրանցից ազատվելու միջոցով: Սակայն անհրաժեշտ են մեծածավալ գիտելիքներ՝ մի օրենքից ազատվելու և դրա փոխարեն մեկ ուրիշը չստեղծելու համար:

Օրենքները և դրանց ձևերը տարբեր են՝ կախված նրանից, թե որ տեսանկյունից ենք դիտարկում արարման ճառագայթը:

Մեր համակարգում արարման ճառագայթի վերջնակետը, այլ կերպ ասած, աճող ընձյուղի ծայրը, Լուսինն է: Որպեսզի Լուսինն աճի, այսինքն, զարգանա և նոր բողբոջներ արձակի, այն Երկիր մոլորակից ստանում է էներգիա, որը սռաջանում է Արևի, Արեգակնային համակարգի այլ մոլորակների և հենց Երկիր մոլորակի համատեղ գործունեությունից: Այս էներգիան կուտակվում և պահպանվում է մի հսկա

ակկումույատորում, որը տեղակայված է Երկիր մոլորակի մակերեսին: Այդ ակկումույատորը օրգանական կյանքն է Երկիր մոլորակի վրա: Երկրի վրայի օրգանական կյանքը սնում է Լուսինի: Երկրի վրա ապրող ամեն բան՝ մարդիկ, կենդանիները, բույսերը սնունդ է Լուսնի համար: Լուսինը մի հսկա կենդանի էակ է, որը սնվում է այն ամենով ինչ ապրում և աճում է Երկրի վրա: Լուսինը չէր կարող գոյություն ունենալ առանց Երկրի օրգանական կյանքի, ինչպես օրգանական կյանքը Երկրի վրա չէր կարող գոյություն ունենալ առանց Լուսնի: Դեռ ավելին՝ Լուսինը օրգանական կյանքի համար հսկայական էլեկտրամագնիս է: Եթե էլեկտրամագնիսը մի պահ կանգ առներ, ապա օրգանական կյանքը կհավասարվեր զրոյի:

Լուսնի աճի և տաքացման ընթացքը Երկրի վրա կյանքի և մահի հետ է կապված: Ամեն կենդանի էակ մահանալիս որոշակի քանակությամբ էներգիա է արձակում, ինչը ժամանակին նրան «կենդանություն էր հաղորդում»: Բոլոր կենդանի էակների՝ բույսերի, կենդանիների, մարդկանց էներգիան կամ «հոգիները» էլեկտրամագնիսական ուժով ձգվում են դեպի Լուսին՝ իրենց հետ տանելով այն տաքությունն ու կյանքը, որից կախված է Լուսնի աճը, այսինքն՝ արարման ճառագայթի աճը: Տիեզերքի տնտեսության մեջ ոչինչ չի կորչում, և որոշակի էներգիան ավարտելով իր աշխատանքը՝ մեկ մակարդակից անցնում է մյուսին:

Այն հոգիները, որ գնում են դեպի Լուսին՝ պահպանելով որոշակի գիտակցություն և հիշողություն, հայտնվում են ինսունվեց օրենքների ներքո և հանքային կյանքի պայմաններում. այլ կերպ ասած՝ այնպիսի պայմաններում, որից փախչելու հնար չկա և որտեղ միակ տարբերակը համընդհանուր էվոլյուցիան է, որն ընթանում է անչափ երկարատև մոլորակային ցիկլերով: Լուսինը «ծայրամասում» է գտնվում, աշխարհի վերջնամասում. այն քրիստոնեական ուսմունքի «արտաքին խավարն է», որտեղ կա «սուզ և ատամների կրճտոց»: Լուսնի ազդեցությունը բոլոր կենդանի էակների վրա դրսևորվում է այն ամենում ինչ տեղի է ունենում Երկիր մոլորակի վրա: Լուսինը գլխավոր կամ, ավելի շուտ, ամենամոտ, անմիջական շարժող ուժն է այն ամենի, ինչ տեղի է ունենում օրգանական կյանքում: Լուսինը կախման մեջ է պահում և վերահսկում է բոլոր շարժումները, գործողությունները, մարդկանց, կենդանիների և բույսերի դրսևորումները: Օրգանական կյանքի զգայուն ժապավենը, որով պատված է երկրագունդը ամբողջովին կախվածության մեջ է գտնվում հսկայական էլեկտրամագնիսից, որը կլանում է դրա կենսունակությունը: Մարդը, ինչպես ցանկացած այլ կենդանի էակ, կյանքի սովորական պայմաններում չի կարող ձերբազատվել Լուսնից: Նրա բոլոր շարժումները և հետևաբար նրա բոլոր գործողությունները ղեկավարում է Լուսինը: Եթե նա սպանում է որևէ մեկին, Լուսինն է դրա պատճառը, եթե նա զոհաբերում է իրեն մյուսների համար՝ դա նույնպես Լուսինն է: Բոլոր չար արարքները, հանցագործությունները, ինքնազոհաբերության մղումները, բոլոր հերոսական սխրագործությունները, ինչպես նաև սովորական կյանքի առօրյա գործողությունները Լուսնի իշխանության տակ են գտնվում:

Մտավոր ուժի և կարողությունների զարգացման հետ մեկտեղ առաջացող ազատագրումը ազատում է Լուսնից: Մեր կյանքի մեխանիկական մասը կախված է

Լուսնից և ենթակա է Լուսնին: Եթե մենք մեր ներսում գիտակցություն և կամք ձևավորենք, դրանց ենթարկելով մեր մեխանիկական կյանքը և բոլոր մեր մեխանիկական դրսևորումները, ապա կկարողանանք խուսափել Լուսնի իշխանությունից:

Հաջորդ գաղափարը, որ անհրաժեշտ է յուրացնել, տիեզերքի նյութեղենությունն է, որն արարման ճառագայթի ձևով է հանդես գալիս: Այս տիեզերքում ամեն բան կարելի է կշռել և չափել: Բացարձակը այնքան նյութական է, կշռելի և չափելի, որքան Լուսինը կամ մարդը: Եթե Բացարձակը Աստված է (Արարիչը), կնշանակի, որ հնարավոր է կշռել և չափել Աստծուն, նրան տարանջատել բաղադրիչ մասերի, «հաշվարկել» և արտահայտել այն որոշակի բանաձևի միջոցով:

Մակայն «նյութեղենության» գաղափարը այնքան հարաբերական է, որքան ցանկացած այլ բան: Եթե հիշենք, թե ինչպես «մարդու» գաղափարը և այն ամենն, ինչ վերաբերում է նրան՝ լավը, վատը, ճշմարտությունը, խաբեությունը և այլն, բաժանվում են տարբեր կատեգորիաների («մարդ համար մեկ», «մարդ համար երկու» և այլն), ապա հեշտ կլինի հասկանալ, որ «աշխարհ» գաղափարը և այն ամենն ինչ վերաբերում է աշխարհին նույնպես բաժանվում են տարբեր կատեգորիաների: Արարման ճառագայթը աշխարհում յոթ հարթություն է սահմանում, յոթ աշխարհ՝ մեկը մյուսի ներսում: Այն ամենն, ինչ վերաբերում է աշխարհին նույնպես յոթ կատեգորիաների է բաժանվում՝ մեկ կատեգորիան մյուսի ներսում: Բացարձակի նյութեղենությունը պատկանում է նյութեղենության մի դասի, որը տարբերվում է «բոլոր աշխարհների» նյութեղենությունից: «Բոլոր աշխարհների» նյութեղենությունը տարբերվում է «բոլոր արևների» նյութեղենությունից: «Բոլոր արևների» նյութեղենությունը պատկանում է մի դասի, որը տարբերվում է մեր Արեգակի նյութեղենությունից: Մեր Արեգակի նյութեղենությունը պատկանում է մի դասի, որը տարբերվում է «բոլոր մոլորակների» նյութեղենությունից:

«Բոլոր մոլորակների» նյութեղենությունը մի դասի է պատկանում, որ տարբերվում է Երկրի նյութեղենությունից, իսկ Երկրի նյութեղենությունը տարբերվում է Լուսնի նյութեղենությունից: Այս գաղափարը սկզբում դժվար է ընկալել: Մարդիկ սովորաբար կարծում են, որ *մատերիան* ամենուրեք նույնն է: Ողջ ֆիզիկան, աստղաֆիզիկան, քիմիան, այնպիսի մեթոդները, ինչպիսիք են լուսապատկերային վերլուծությունը և այլն հիմնված են այս ենթադրության վրա: Այո, մատերիան նույնն է, սակայն նյութեղենությունը տարբեր է: Նյութեղենության տարբեր մակարդակները ուղղակիորեն կախման մեջ են գտնվում տվյալ պահին դրսևորվող էներգիայի որակից և հատկություններից:

Մատերիան կամ սուբստանցիան անխուսափելիորեն վկայում են ուժի կամ էներգիայի գոյության մասին: Մա չի նշանակում, որ աշխարհի դուալիստական ընկալումը պարտադիր պայման է: Մատերիայի և ուժի գաղափարները ամեն ինչի պես հարաբերական են: Բացարձակում, որտեղ ամեն ինչ կազմում է մեկ ամբողջություն, մատերիան և ուժը նույնպես մեկն են: Բայց այս կապակցությամբ մատերիան և ուժը որպես այդպիսին աշխարհի իրական սկզբունքները չեն, այլ մեր

կողմից դիտարկվող ֆենոմենալ աշխարհին բնորոշ հատկանիշներ: Տիեզերքի ուսումնասիրությունը սկսելու համար բավական է տարրական պատկերացում ունենալ մատերիայի և էներգիայի մասին, որոնք մենք կարող ենք ստանալ մեր զգայարանների անմիջական ընկալման միջոցով: «Մշտականը» դիտարկվում է որպես նյութական, որպես մատերիա, իսկ «փոփոխությունները» «մշտականի» կամ մատերիայի վիճակում կոչվում են ուժի կամ էներգիայի դրսևորումներ: Բոլոր այս փոփոխությունները կարելի է համարել տատանումների և ալիքաձև շարժումների արդյունք, որոնք սկիզբ են առնում կենտրոնից, այսինքն՝ Բացարձակից և տարածվում են բոլոր ուղղություններով՝ խաչվելով, բախվելով և ձուլվելով մեկը մյուսի հետ, մինչև որ վերջնականապես կանգ կառնեն արարման ճառագայթի վերջում:

Այս տեսանկյունից, ուրեմն, աշխարհը բաղկացած է տատանումներից և մատերիայից կամ տատանման մեջ գտնվող մատերիայից կամ տատանվող մատերիայից:

Բացարձակում տատանումները ամենաարագն են, իսկ մատերիան չափազանց նոսր: Հաջորդ աշխարհում տատանումները ավելի դանդաղ են, իսկ մատերիան ավելի խիտ է: Ավելի այն կողմ մատերիան ավելի թանձր է և համապատասխանորեն տատանումները՝ ավելի դանդաղ:

Ընդունված է համարել, որ «մատերիան» բաղկացած է «ատոմներից»: Ատոմները այս կապակցությամբ մատերիայի վերջնական տրոհման արդյունք են համարվում: Մատերիայի յուրաքանչյուր դասում դրանք պարզապես տվյալ մատերիայի որոշակի փոքր *մասնիկներ* են, որոնք անբաժանելի են միայն տվյալ մակարդակում: Միայն Բացարձակի ատոմներն են իրականում անտրոհելի. հաջորդ մակարդակի՝ աշխարհ 3-ի ատոմները կազմված են Բացարձակի երեք ատոմներից, այլ կերպ ասած՝ դրանք երեք անգամ ավելի մեծ ու ծանր են և հետևաբար դրանց շարժումը ավելի դանդաղ է: Աշխարհ 6-ի ատոմները բաղկացած են Բացարձակի վեց ատոմներից, որոնք միաձուլված են և կազմում են մեկ ատոմ: Համապատասխանաբար դրանց շարժումներն ավելի դանդաղ են: Հաջորդ աշխարհի ատոմները բաղկացած են տասներկու սաղմնային մասնիկներից, իսկ հաջորդ աշխարհները՝ քսանչորս, քառասունուրթ և ինսունվեց մասնիկներից: Աշխարհ 96-ի ատոմը հսկայական չափի է, եթե համեմատենք այն աշխարհ 1 ատոմի հետ: Դրա շարժումները համապատասխանաբար ավելի դանդաղ են, և նման ատոմներից բաղկացած մատերիան հետևաբար ավելի խիտ է:

Գծապատկեր 4

Բացարձակի ատոմ

«Բոլոր աշխարհների» ատոմ

«Բոլոր արևների» ատոմ

Արևի ատոմ

«Բոլոր մոլորակների» ատոմ

Երկիր մոլորակի ատոմ

Լուսնի ատոմ

Արարման ճառագայթի յոթ աշխարհները ներկայացնում են նյութեղնության յոթ դասերը: Լուսնի նյութեղնությունը տարբերվում է Երկրի նյութեղնությունից, երկրի նյութեղնությունը տարբերվում է մոլորակների աշխարհի նյութեղնությունից, մոլորակների աշխարհի նյութեղնությունը տարբերվում է Արևի նյութեղնությունից և այլն:

Այսպիսով մատերիայի մեկ գաղափարի փոխարեն մենք ունենք յոթ մատերիայի դաս, սակայն նյութեղնության մասին մեր ունեցած սովորական պատկերացումներով շատ դժվար է ընկալել աշխարհ 96-ի և 48-ի նյութեղնությունը: Մեր ֆիզիկայի և քիմիայի գիտական տեսության տեսանկյունից աշխարհ 24-ի մատերիան չափազանց նոսր է մատերիա համարվելու համար. նման մատերիան գրեթե վարկածային է: Աշխարհ 12-ի առավել նուրբ մատերիան սովորական ուսումնասիրություններում նյութականությանը բնորոշ որևէ առանձնահատկություն չունի: Բոլոր այս մատերիաները, որոնք պատկանում են տիեզերքի տարբեր դասերին, շերտերով առանձնացված չեն, այլ ավելի շուտ միախառնված են և փոխներթափանցում են մեկը մյուսի մեջ: Մենք տարբեր խտության մատերիաների փոխներթափանցման գաղափար կարող ենք կազմել, եթե դիտարկենք մեզ հայտնի տարբեր խտությունների մատերիաների փոխներթափանցումը: Փայտե կտորը կարող է տոգորվել ջրով, իսկ ջուրն իր հերթին կարող է լցվել գազով: Տարբեր մատերիաների նման հարաբերություն կարելի է դիտարկել ողջ տիեզերքում: Առավել նուրբ մատերիան ներթափանցում է առավել կոշտ մատերիայի մեջ:

Այն մատերիան, որն ունի մեզ համար ըմբռնելի նյութեղնություն, ըստ խտության բաժանվում է մի քանի մակարդակների՝ պինդ, հեղուկ, գազային: Գոյություն ունի մատերիայի ևս մեկ աստիճանավորում՝ ճառագայթային էներգիա, այն է՝ էլեկտրականությունը, լույսը, մագնիսականությունը և այլն: Սակայն ցանկացած մակարդակի վրա, այլ կերպ ասած՝ նյութականության յուրաքանչյուր դասում կարելի է գտնել տվյալ մատերիայի տարբեր վիճակների նմանատիպ հարաբերություններ և բաժանումներ: Սակայն ինչպես արդեն ասվել է բարձր մակարդակների մատերիան ավելի ցածր մակարդակների համար նյութական չէ:

Մեզ շրջապատող աշխարհի ողջ մատերիան՝ ուտելիքը, որով մենք սնվում ենք, ջուրը, որ խմում ենք, օդը, որ շնչում ենք, քարերը, որոնցով կառուցված են մեր տները, մեր մարմինները, ամեն ինչ ներթափանցվում է տիեզերքում գոյություն ունեցող մատերիաներով: Պարտադիր չէ ուսումնասիրել կամ հետազոտել Արևը՝ Արեգակնային աշխարհի մատերիան բացահայտելու համար. այս մատերիան առկա է մեզանում և մեր ատոմների բաժանման արդյունքն է: Նույն կերպով մենք մեր մեջ պարունակում ենք մյուս բոլոր աշխարհների մատերիան: Մարդը, բառի ամբողջական իմաստով, «տիեզերքի մանրապատկերն է». նրանում կան բոլոր այն մատերիաները, որից բաղկացած է տիեզերքը, նրանում գործում են տիեզերքի կյանքը

կառավարող միևնույն օրենքները և ուժերը: Այդ պատճառով, մարդուն ուսումնասիրելիս, մենք կարող ենք ողջ աշխարհն ուսումնասիրել, այնպես ինչպես աշխարհն ուսումնասիրելիս՝ կարող ենք ուսումնասիրել մարդուն:

Սակայն մարդու և աշխարհի միջև ամբողջական զուգահեռ կարելի է անցկացնել միայն այն դեպքում, եթե դիտարկենք «մարդուն» բառի ամբողջական իմաստով, այսինքն՝ մի մարդու, ում մոտ զարգացած են մարդուն ներհատուկ ընդունակությունները: Ոչ զարգացած մարդը, մի մարդ, որ իր էվոլյուցիայի ճանապարհն ավարտին չի հասցրել, չի կարող տիեզերքի ամբողջական պատկերը ներկայացնել. նա անավարտ աշխարհ է:

Ինչպես արդեն ասվեց, սեփական անձի ուսումնասիրությունը պետք է կատարվի տիեզերքի ֆունդամենտալ օրենքների ուսումնասիրությանը զուգահեռ: Օրենքները ամենուր և բոլոր մակարդակների վրա նույնն են: Սակայն, միևնույն օրենքները դրսևորվելով տարբեր աշխարհներում, այն է՝ տարբեր պայմաններում, առաջ են բերում տարբեր երևույթներ: Հարաբերությունների ուսումնասիրությունը օրենքների և մակարդակների միջև, որում դրանք գտնում են իրենց դրսևորումը, բերում է մեզ *հարաբերականության* ուսումնասիրությանը:

Հարաբերականության գաղափարը շատ կարևոր տեղ է գրավում մեր ուսմունքում, և ավելի ուշ մենք կանդրադառնանք դրան: Սակայն ամենից առաջ անհրաժեշտ է դիտարկել յուրաքանչյուր երևույթի և դրա դրսևորման հարաբերականությունը ըստ վերջինիս՝ տիեզերական համակարգում *գտնվելու վայրի*:

Մենք գտնվում ենք Երկիր մոլորակի վրա և ամբողջովին կախված ենք այն օրենքներից, որ գործում են այստեղ: Տիեզերական տեսանկյունից Երկիր մոլորակը շատ վատ տեղ է. այն նման է Սիբիրի ամենահեռավոր վայրերին՝ հեռու ամեն ինչից, որտեղ ցուրտ է, իսկ կյանքը՝ դժվար: Եթե ամեն ինչ այլուր ինքնուրույն է տրվում կամ հեշտությամբ է ձեռք բերվում, այստեղ ձեռք է բերվում միայն տքնաջան աշխատանքի միջոցով. ամեն ինչի համար անհրաժեշտ է պայքարել ինչպես կյանքում, այնպես էլ աշխատանքում: Կյանքում երբեմն պատահում է, որ մարդը ժառանգություն է ստանում և այնուհետև ապրում է՝ ոչինչ չանելով: Նման բան աշխատանքում տեղի չի ունենում: Բոլորը հավասար են և բոլորը հավասարապես աղքատ են:

Անդրադառնալով երեքի օրենքին՝ անհրաժեշտ է սովորել, թե ինչպես կարելի է ի հայտ բերել դրա դրսևորումները բոլոր մեր գործողություններում և բոլոր մեր ուսումնասիրություններում: Այս օրենքի կիրառումը ցանկացած բնագավառում իսկույն բացահայտում է նորը և այն, ինչ մենք նախկինում չէինք տեսնում: Օրինակի համար վերցնենք քիմիան: Սովորական գիտությանը հայտնի չէ երեքի օրենքը և այն ուսումնասիրում է մատերիան՝ հաշվի չառնելով դրա տիեզերական հատկությունները: Բայց սովորական քիմիայից բացի գոյություն ունի նաև այլ, յուրահատուկ քիմիա կամ, եթե կցանկանաք, կարող ենք կոչենք այն ավքիմիա, որն ուսումնասիրում է մատերիան՝ հաշվի առնելով դրա տիեզերական

հատկությունները: Ինչպես արդեն ասվել է, յուրաքանչյուր սուբստանցիայի տիեզերական հատկություններն առաջին հերթին կանխորոշվում են ըստ դրա *տեղի* և երկրորդ հերթին այն ուժով, որը գործում է տվյալ պահին նրա միջոցով: Նույնիսկ միննույն վայրում տվյալ մատերիայի բնույթը կարող է փոփոխության ենթարկվել՝ կախված այն ուժից, որ դրսևորվում է նրանում: Յուրաքանչյուր սուբստանցիա կարող է ուղեկցել երեք ուժերից ցանկացածին և ըստ այդմ էլ լինել *ակտիվ*, *պասիվ* և *չեզոք*: Սուբստանցիան կարող է լինել ոչ առաջինը, ոչ երկրորդը, ոչ էլ երրորդը, եթե նրանում որևէ ուժ չի դրսևորվում տվյալ պահին կամ, եթե այն վերցված է ուժերի դրսևորումից զատ: Այսկերպ յուրաքանչյուր սուբստանցիա չորս տարբեր ասպեկտներով կամ վիճակներով է հանդես գալիս: Այս կապակցությամբ պետք է նշել, որ երբ խոսում ենք մատերիայից, ապա չենք խոսում քիմիական տարրերից: Այն առանձնահատուկ քիմիան, որի մասին ես խոսում եմ, նույնիսկ ամենաբարդ գործառույթ ունեցող յուրաքանչյուր սուբստանցիան դիտարկում է՝ որպես տարր: Միայն այս դեպքում է հնարավոր ուսումնասիրել մատերիայի տիեզերական հատկությունները, քանի որ բոլոր բարդ բաղադրություններն ունեն իրենց տիեզերական նպատակն ու նշանակությունը: Այս տեսանկյունից տվյալ սուբստանցիայի ատոմը նրա ամենափոքր քանակությունն է, որ պահպանում է վերջինիս բոլոր քիմիական, ֆիզիկական և *տիեզերական* հատկությունները: Հետևաբար տարբեր սուբստանցիաների «ատոմի» չափը նույնը չէ: Որոշ դեպքերում «ատոմը» կարող է տեսանելի լինել անգամ անզեն աչքի համար:

Յուրաքանչյուր սուբստանցիայի չորս ասպեկտները կամ վիճակները ունեն հստակ անվանումներ:

Երբ սուբստանցիան ուղեկցում է առաջին կամ ակտիվ ուժին, այն կոչվում է «ածխածին» և, ինչպես քիմիայի ածխածինը, այն նշվում է C տառով:

Երբ սուբստանցիան ուղեկցում է երկրորդ կամ պասիվ ուժին, այն կոչվում է «թթվածին» և, ինչպես քիմիայի թթվածինը, այն նշվում է O տառով:

Երբ սուբստանցիան ուղեկցում է երրորդ կամ չեզոք ուժին, այն կոչվում է «ազոտ» և, ինչպես քիմիայի ազոտը, այն նշվում է N տառով:

Երբ սուբստանցիան դիտարկվում է դրանում դրսևորվող ուժից զատ, այն կչվում է «ջրածին» և քիմիայի ջրածնի պես նշվում է H տառով:

Ակտիվ, պասիվ և չեզոք ուժերը նշանակվում են 1, 2, 3 թվերով, իսկ սուբստանցիաները C, O, N և H տառերով: Այս նշանակումները պետք է հասկանալ:

- Արդյո՞ք այս չորս տարրերը համապատասխանում են հնագույն այլքիմիական տարրերին՝ կրակին, օդին, ջրին և հողին:

- Այո, համապատասխանում են, - պատասխանեց Գ.-ն, - մենք դրանք կիրառելու ենք հետագայում. դուք կհասկանաք, թե ինչու:

Այն ինչ լսեցի, ինձ շատ հետաքրքրեց, քանի որ այն կապում էր Գ.-ի համակարգը Տարոյի համակարգին, որը մի ժամանակ, կարծես, ինձ համար թաքնված գիտելիքների բացահայտման համար հնարավոր բանային լիներ: Դեռ ավելին՝ այն

ցույց տվեց ինձ *երեքը չորսի* հարաբերությունը, որը նորույթ էր ինձ համար և ինչը ես չէի կարողանում պարզել Տարոյի միջոցով: Տարոն անկասկած հիմնված է *չորս սկզբունքների օրենքի վրա*: Մինչ այժմ Գ.-ն *երեք սկզբունքների օրենքից* էր խոսել: Սակայն ես այժմ տեսնում էի, թե ինչպես էր երեքը վերածվում չորսի. հասկանում էի նաև նման տարանջատման անհրաժեշտությունը: Նման տարանջատումը մեր անմիջական դիտարկման համար անհրաժեշտ է այնքան ժամանակ, որքան գոյություն ունի *ուժի* և *մատերիայի* միջև տարանջատումը: «Երեքը» վերաբերում էր ուժին, իսկ «չորսը»՝ մատերիային: Իհարկե այս ամենի լրացուցիչ իմաստը դեռևս անըմբռնելի էր ինձ համար, սակայն նույնիսկ այն սուղ տեղեկությունը, որ մեզ տվել էր Գ.-ն, հետագայի համար խոստումնալից էր թվում:

Դեռ ավելին՝ ինձ շատ էին հետաքրքրում տարրերի անվանումները. «ածխածին», «թթվածին», «ազոտ» և «ջրածին»: Պետք է նշեմ, որ թեև Գ.-ն խոստացել էր բացատրել մեզ, թե ինչու էր նա կիրառում հենց այս տերմինները, այլ ոչ թե այլ տերմիններ, այնուամենայնիվ նա դա չարեց: Ավելի ուշ ես կրկին կանդրադառնամ այս անվանումներին: Այս անվանումների ծագումը սահմանելու փորձերը օգնեցին ինձ Գ.-ի համակարգի և դրա նախապատմության մասին շատ բաներ հասկանալ:

Հանդիպումներից մեկի ժամանակ, ուր բավականին մեծ քանակությամբ մարդիկ էին հրավիրվել, որ երբևիցե չէին լսել Գ.-ին, տրվեց հետևյալ հարցը.

- Մարդն անմահ է, թե՞ ոչ:

- Ես կփորձեմ պատասխանել այս հարցին, - ասեց Գ.-ն, - սակայն պետք է զգուշացնեմ ձեզ, որ հնարավոր չէ ամբողջապես բացատրել այդ երևույթը հասարակ գիտելիքներում պարունակվող նյութի և համընդհանուր լեզվի միջոցով:

Դուք հարցրեցիք մարդն անմահ է, թե՞ ոչ: Ես կպատասխանեմ՝ այո և ոչ:

Այս հարցը կարելի է տարբեր կողմերից դիտարկել: Առաջին հերթին՝ ի՞նչ է *անմահությունը*: Դուք բացարձակ անմահությունի՞ց եք խոսում, թե՞ ընդունում եք, որ գոյություն ունեն անմահության տարբեր մակարդակներ: Եթե, օրինակ, մարմնի մահից հետո մնում է մի բան, որ շարունակում է ապրել որոշ ժամանակ՝ պահպանելով իր գիտակցությունը, կարելի է արդյոք այս երևույթն անվանել անմահություն, թե ոչ: Կամ եկեք հարցադրումն այլ կերպ դնենք. նման գոյության համար որքա՞ն ժամանակ է անհրաժեշտ որպեսզի այն անմահություն համարվի: Ենթադրում է արդյո՞ք այս հարցն այն հավանականությունը, որ «անմահությունը» տարբեր մարդկանց համար տարբեր կարող է լինել: Գոյություն ունեն նման անհամար հարցադրումներ: Մա ասում եմ ընդամենը ցույց տալու համար, թե որքան մշուշոտ են նման հարցադրումները և ինչպես կարող են պատրանքների տեղիք տալ այնպիսի բառերը, ինչպիսիք են «անմահությունը»: Իրականում ոչինչ հավերժ չէ,

նույնիսկ Աստված: Սակայն Աստծո և մարդու միջև մեծ տարբերություն կա և, իհարկե, Աստծո մահը տարբերվում է մարդկանց մահից: Լավ կլիներ, եթե «անմահություն» բառը փոխարինեինք «ետմահու գոյություն» բառակապակցությամբ: Այս դեպքում ես կպատասխանեմ, որ մարդն ունի մահից հետո գոյություն ունենալու հնարավորությունը: Սակայն հնարավորությունը մի բան է, իսկ հնարավորության իրագործումը՝ մեկ այլ բան:

Եկեք այժմ փորձենք հասկանալ, թե ինչից է կախված այդ հնարավորությունը, և ինչ նշանակություն ունի դրա իրականացումը:

Այնուհետև Գ.-ն համառոտ ներկայացրեց այն, ինչ արդեն պատմել էր մարդու և աշխարհի կառուցվածքի մասին: Նա նկարեց արարման ճառագայթի գծապատկերը և մարդու չորս մարմինների սխեման (տես գծապատկեր 1, 3): Սակայն մարդու մարմինների վերաբերյալ նա մի դետալ ներառեց, որի հետ նա մեզ դեռևս չէր ծանոթացրել:

Նա կրկին կիրառեց արևելյան համեմատությունը՝ գծելով ձիու, կառապանի և տիրոջ պատկերը, այս անգամ ավելացնելով ևս մեկ դետալ, որը նա նախկինում չէր ընդգրկել:

- Մարդն ունի բարդ կառուցվածք,- ասեց նա, - և բաղկացած է չորս մասերից, որոնք կարող են լինել կապված կամ անջատված, կամ էլ վատ կապված: Կառքը ձիուն կապված է կողափայտերի միջոցով, ձին կապված է կառապանին սանձերի միջոցով, իսկ կառապանը կապված է տիրոջը նրա ձայնի միջոցով: Սակայն կառապանը պետք է լսի և հասկանա տիրոջ ձայնը: Նա պետք է իմանա, թե ինչպես ձիավարել, իսկ ձիերն էլ պետք է վարժված լինեն և իմանան՝ ինչպես ենթարկվել սանձերին: Այն, ինչ վերաբերում է ձիերի և կառքի միջև հարաբերությանը, ապա պետք է ճիշտ լծել ձիերին: Հետևաբար այս բարդ կառուցվածքի չորս հատվածներում գոյություն ունի երեք կապ (տես պատկեր 5բ): Եթե կապերից մեկում որևիցե բան բացակայում է, կառուցվածքը չի կարող գործել որպես մեկ ամբողջություն: Հետևաբար՝ կապերը նույնքան կարևոր են, որքան «մարմինը»: Իր վրա աշխատանք տանելով՝ մարդը զուգահեռաբար աշխատում է նաև իր «մարմինների» և «կապերի» վրա: Սակայն սովյալ աշխատանքները տարաբնույթ են:

Ինքնադաստիարակումը պետք է սկսվի կառապանից: Կառապանը բանականությունն է: Որպեսզի կառապանը կարողանա լսել տիրոջ ձայնը նա պետք է *քնած չլինի*, այսինքն՝ նա պետք է արթուն լինի: Հնարավոր է նաև, որ տերը խոսի կառապանի համար անհասկանալի լեզվով: Այդ դեպքում կառապանը պետք է սովորի այդ լեզուն: Երբ նա սովորի տվյալ լեզուն, նա կհասկանա տիրոջը: Սակայն դրա հետ մեկտեղ նա պետք է սովորի ձիավարել, ձիուն լծել կառքը, կերակրել ու խնամել նրան, հետևել կառքին, քանի որ անիմաստ է դառնում տիրոջը հասկանալը, եթե կառապանն ի վիճակի չէ անելու որևէ բան: Տերը կարգադրում է նրան առաջ շարժվել, բայց նա ի վիճակի չէ շարժվելու, քանի որ ձիուն չեն կերակրել, չեն լծել և նա չգիտի, թե որտեղ են սանձերը: Ձին մեր զգացմունքներն են, կառքը՝ մեր մարմինը:

Բանականությունը պետք է սովորի կառավարել զգացմունքները: Զգացմունքները միշտ փորձում են մարմինը իրենց ետևից տանել: Ահա այն կարգը, որի համաձայն պետք է ընթանա ինքնադաստիարակման աշխատանքը: Սակայն ուշադրություն դարձրեք այն փաստին, որ մարմինների՝ կառապանի, ձիու և կառքի վրա տարած աշխատանքը, տարբերվում է «կապերի» վրա տարած աշխատանքից. այսինքն՝ կառապանի «հասկացողությունը», որը կապում է նրան տիրոջ հետ, «սանձերը», որ կապում են նրան ձիուն, ինչպես նաև կողափայտերը և լծակները, որ կապում են ձիուն կառքին, մեկ այլ բնույթի աշխատանք են պահանջում:

Հաճախ պատահում է, որ մարմինները բավականին առողջ են և պահպանում են ճիշտ հաջորդականությունը, սակայն «կապերը» չեն գործում: Այս դեպքում ու՞մ է անհրաժեշտ ողջ կառուցվածքը: Ինչպես թերզարգացած մարմինների դեպքում՝ ողջ կառուցվածքը անխուսափելիորեն առաջնորդվելու է *ներքևից*, այսինքն՝ ոչ թե տիրոջ կամքով, այլ պատահականությամբ:

Երկու մարմին ունեցող մարդու մոտ երկրորդ մարմինը ֆիզիկական մարմնի համեմատ ակտիվ է: Սա նշանակում է, որ «աստեղային մարմնի» գիտակցությունը կարող է իշխանություն դրսևորել ֆիզիկական մարմնի հանդեպ:

Գ.-ն պլյուսի նշան դրեց «աստեղային մարմնի» վերևում և մինուս՝ ֆիզիկականի: (տես պատկեր 5գ)

- Երեք մարմին ունեցող մարդու մոտ երրորդ կամ «մտավոր մարմինը» աստեղային և ֆիզիկական մարմինների համեմատ ակտիվ է: Սա նշանակում է , որ «մտավոր մարմնի» գիտակցությունը վերահսկում է «աստեղային մարմինը» և «ֆիզիկական մարմինը»:

Գ.-ն պլյուսի նշան դրեց «մտավոր» և մինուսի՝ «աստեղային» և ֆիզիկական մարմինների վերևում՝ դրանք վերցնելով փակագծերի մեջ:

«Չորս մարմին ունեցող մարդու մոտ ակտիվ մարմինը չորրորդ մարմինն է: Սա նշանակում է, որ չորրորդ մարմնի գիտակցությունը բացարձակ վերահսկողություն է սահմանում «մտավոր», «աստեղային» և ֆիզիկական մարմինների վրա:

Գ.-ն պլյուսի նշան դրեց չորրորդ մարմնի վրա և մինուս՝ մյուս երեքի վրա՝ Ս վերցնելով դրանք փակագծերի մեջ:

Պատկեր 5

- Ինչպես տեսնում եք, - ասեց Գ.-ն, - գոյություն ունեն տարբեր իրավիճակներ: Մի դեպքում բոլոր գործառույթները վերահսկում է ֆիզիկական մարմինը: Այն ակտիվ է. դրա համեմատ մնացած ամեն ինչ պասիվ է (տես պատկեր 5 ա): Մեկ այլ դեպքում

«մտավոր» մարմինն է իշխում «աստեղային» և ֆիզիկական մարմիններին: Եվ վերջին դեպքում չորրորդ մարմինն է իշխում առաջին երեք մարմիններին: Մենք նախկինում արդեն տեսել ենք, որ միայն ֆիզիկական մարմին ունեցող մարդու մոտ իր տարբեր ֆունկցիաների միջև միևնույն կարգի հարաբերություններ են հնարավոր: Ֆիզիկական գործառույթները կարող են վերահսկել զգացմունքները, միտքը և գիտակցությունը: Զգացմունքները կարող են վերահսկել ֆիզիկական գործառույթները: Միտքը կարող է վերահսկել ֆիզիկական գործառույթները և զգացմունքը: Եվ *գիակցությունը* կարող է վերահսկել ֆիզիկական գործառույթները, զգացմունքը և միտքը:

Երկու, երեք և չորս մարմին ունեցող մարդկանց մոտ ամենաակտիվ մարմինը ամենաերկարն է ապրում, այսինքն՝ այն «անմահ է» ավելի ցածր մարմինների նկատմամբ:

Նա կրկին գծեց արարման ճառագայթի մի պատկեր և Երկիր մոլորակի կողքին պատկերեց մարդու ֆիզիկական մարմինը:

- Սա հասարակ մարդ է, - ասեց նա, - մարդ համար մեկ, երկու, երեք և չորս: Նա ունի միայն ֆիզիկական մարմին: Ֆիզիկական մարմինը մահանում է և ոչինչ չի մնում դրանից: Ֆիզիկական մարմինը բաղկացած է երկրային մատերիայից և մահանալուց հետո այն վերադառնում է հող: *Այն հող է և կվերադառնա հողին:* Նման մարդու տեսակի համար որևէ «անմահությունից» խոսելն անհնար է: Սակայն, եթե մարդն ունի երկրորդ մարմինը (նա գծապատկերի վրա մոլորակներին զուգահեռ տեղադրեց երկրորդ մարմինը), ապա քանի որ երկրորդ մարմինը բաղկացած է մոլորակային աշխարհի մատերիայից, այն ֆիզիկական մարմնի համեմատ կարող է ավելի երկար գոյատևել: Բառի ամբողջական իմաստով այն անմահ չէ, քանի որ որոշ ժամանակ անց նա էլ է վախճանվում: Սակայն, ամեն դեպքերում, այն չի մահանում ֆիզիկական մարմնի հետ:

Եթե մարդը տիրապետում է երրորդ մարմնին (գծագրի վրա նա տեղադրեց երրորդ մարմինը Արևի կողքին), ապա այն բաղկացած է Արևի մատերիայից և կարող է գոյատևել «աստեղային» մարմնի մահից հետո:

Չորրորդ մարմինը բաղկացած է *աստղերի աշխարհի* մատերիայից, այսինքն՝ մատերիայից, որը չի պատկանում Արեգակնային համակարգին և հետևաբար, եթե այն բյուրեղացել է Արեգակնային համակարգի սահամաններում, ապա համակարգում որևէ բան չկա, որ կարողանա ոչնչացնել այն: *Սա նշանակում է, որ չորրորդ մարմին ունեցող մարդն անմահ է Արեգակնային համակարգի սահամաններում:* [Պատկեր 6]

ԲԱՅԱՐՁԱԿ

ԲՈՒՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐԸ

ԲՈՒՈՐ ԱՐԵՎՆԵՐԸ

ՉՈՐՐՈՐԴ ՄԱՐՄԻՆ: 6 ՕՐԵՆՔ:

ԱՐԵՎԸ

ՄՏԱՎՈՐ ՄԱՐՄԻՆԸ: 12 ՕՐԵՆՔ:

ԲՈԼՈՐ ՄՈԼՈՐԱԿՆԵՐԸ

ԱՍՏԵՂԱՅԻՆ ՄԱՐՄԻՆԸ: 24 ՕՐԵՆՔ:

ԵՐԿԻՐ ՄՈԼՈՐԱԿԸ

ՖԻԶԻԿԱԿԱՆ ՄԱՐՄԻՆԸ: 48 ՕՐԵՆՔ:

ԼՈՒՄԻՆԸ

Այժմ տեսնում եք, թե ինչու հնարավոր չէ անմիջապես պատասխանել հետևյալ հարցին. «Արդյո՞ք մարդն անմահ է, թե ոչ»: Մեկն անմահ է, մյուսը՝ ոչ, երրորդը փորձում է անմահանալ, չորրորդն իրեն համարում է անմահ և հետևաբար պարզապես մարմնի մի կտոր է»:

Երբ Գ.-ն ուղևորվեց Մոսկվա, մեր մշտական խումբը առանց նրա էր հանդիպում: Իմ հիշողության մեջ են մնացել մեր խմբից մի քանի զրույցներ՝ կապված այն ամենի հետ, ինչ վերջերս լսել էինք Գ.-ից:

Հրաշքների գաղափարի մասին շատ զրույցներ վարեցինք, քննարկեցինք նաև այն փաստը, որ Բացարձակն իր կամքը չի կարող թելադրել մեր աշխարհում, որ այս կամքը դրսևորվում է միայն մեխանիկական օրենքների տեսքով և չի կարող դրսևորվել՝ խախտելով այս օրենքները:

Չեմ հիշում, թե մեզանից ով էր, որ առաջինը հիշեց բավականին հայտնի, սակայն ոչ այդքան հարգված դպրոցական մի պատմություն, որում մենք անմիջապես նկատեցինք սովյալ օրենքի արտացոլումը:

Պատմությունը հոգևոր սեմինարիայի տարիքն անց ուսանողի մասին էր, ով ավարտական քննությանը չէր կարողացել յուրացնել Աստծո ամենագործությունը:

- Լավ, բեր որևէ մի բանի օրինակ, որ Ատված չի կարող անել, - ասեց քննող եպիսկոպոսը:

- Դրա համար երկար ժամանակ չի պահանջվի, սրբազան, - պատասխանեց սեմինարիատը: Բոլորը գիտեն, որ նույնիսկ ինքը Տերը չի կարող հասարակ երկուսնոցով կոզիրի մեկանոցին հաղթել:

Դրանից ավելի պարզ օրինակ չէր կարող լինել:

Այս անհեթեթ պատմությունն ավելի շատ իմաստ է պարունակում իր մեջ, քան հազարավոր աստվածաբանական տրակտատներ: Խաղի օրենքները խաղի էությունն են: Այս օրենքների խախտումը կփչացնի ողջ խաղը: Բացարձակն այնքանով կարող է խառնվել մեր կյանքին և փոխարինել բնական, պատահական կամ մեր կողմից ստեղծված արդյունքներն այլ արդյունքներով, որքան այն կարող է երկուսնոցով հաղթել կոզիրի մեկանոցին: Տուրգենևն ինչ-որ մի տեղ գրել է, որ բոլոր հասարակ աղոթքները կարող են մեկով փոխարինվել՝ «Տեր, արա այնպես, որ երկու անգամ երկու չորս չստացվի»: Մա նույնն է ինչ սեմինարիստի կոզիրի տուզը:

Զրույցներից մեկում քննարկվում էին Լուսինը, ինչպես նաև Լուսնի և Երկրի վրա օրգանական կյանքի միջև եղած հարաբերությունները: Եվ կրկին մեր խմբերից մեկը շատ լավ օրինակ բերեց՝ ցույց տալով Լուսնի հարաբերությունն օրգանական կյանքի հետ:

Լուսինը ժամացույցի ծանրաքարն է: Օրգանական կյանքը նման է ժամացույցի մեխանիզմին, որը շարժման մեջ է դրվում ծանրաքարի միջոցով: Ծանրաքարի ծանրությունը և ատամնավոր անիվի վրա տեղադրված շղթան շարժի մեջ են դնում անիվները և ժամացույցի սլաքները: Եթե տեղաշարժենք ծանրաքարը, մեխանիզմի բոլոր շարժումներն անմիջապես կանգ կառնեն: Լուսինը հսկայական ծանրաքար է, որը կախված է օրգանական կյանքի վրա և այն շարժման մեջ է դնում: Ինչ էլ, որ անում ենք՝ լինի դա վատ կամ լավ, ինչպես կամ հիմար արարք, ակերի բոլոր շարժումները և մեր օրգանիզմի բոլոր սլաքները կախված են այս ծանրաքարից, որը շարունակաբար իր ճնշումն է գործադրում մեզ վրա:

Անձամբ ինձ շատ էր հետաքրքրում *տեղանքի* հետ կապված, այսինքն՝ աշխարհի տեղանքի հետ կապված հարաբերականության խնդիրը: Ես վաղուց էի հանգել այն մտքին, որ հարաբերականությունը կապված է չափերի և արագությունների փոփոխարարության հետ: Սակայն *տեղանքի* գաղափարը տիեզերական համակարգում նոր էր ինչպես ինձ, այնպես էլ՝ մյուսների համար: Ինձ համար շատ տարօրինակ էր այն, որ որոշ ժամանակ անց ես համոզվեցի, որ չափը և արագությունը որոշվում են *տեղանքով*, իսկ *տեղանքը* որոշվում է չափով և արագությամբ:

Հիշում եմ ևս մեկ գրույց, որ տեղի ունեցավ այդ ժամանակահատվածում: Ինչ-որ մեկը Գ.-ին հարցրեց *ունիվերսալ լեզվի* հնարավորության մասին. թե այդ հարցն ինչի հետ էր կապված, ես չեմ հիշում:

- Ունիվերսալ լեզվի գոյությունը հնարավոր է, - ասաց Գ.-ն , - սակայն մարդիկ երբևիցե այն չեն ստեղծի:

- Ինչու՞ ոչ,- հարցրեց մեզանից մեկը:

- Առաջին հերթին՝ այն պատճառով, որ այդ լեզուն շատ վաղուց արդեն հնարել են, - պատասխանեց Գ.-ն, - և երկրորդը՝ քանի որ այդ լեզուն հասկանալու և դրանով արտահայտվելու ունակությունը կապված է ոչ միայն այս լեզվի իմացության հետ, այլ նաև *գոյի* հետ: Դեռ ավելին՝ գոյություն ունի ոչ թե մեկ, այլ երեք ունիվերսալ լեզու: Առաջինով կարելի է խոսել և գրել՝ սեփական լեզվի սահմաններում: Միակ տարբերությունն այն է, որ երբ խոսում են առօրյա լեզվով, ապա իրար չեն հասկանում. սակայն մյուս լեզվով խոսելիս՝ նրանք հասկանում են միմյանց: Երկրորդ լեզվի դեպքում՝ գրավոր լեզուն նույնն է բոլոր ժողովրդների համար, ինչպես օրինակ թվերը կամ մաթեմատիկական բանաձևերը. մարդիկ շարունակում են խոսել ամեն

մեկը իր լեզվով, սակայն ամեն դեպքում նրանք հասկանում են միմյանց, թեկուզ և խոսում են մեկը մյուսի համար անհակասանալի լեզուներով: Երրորդ լեզուն՝ թե՛ գրավորը, և թե՛ խոսակցականը, նույնն է բոլորի համար: Այս մակարդակում բոլոր տարբերություններն անհետանում են:

- Արդյո՞ք դա այն չէ, ինչ նկարագրված է Գործք Առաքելոցում որպես Սուրբ Հոգու գալուստ, որտեղ առաքյալները սկսում են տարբեր լեզուների հասկանալ, - հարցրեց ինչ-որ մեկը:

Ես նկատել էի, որ նման հարցերը միշտ զայրացնում էին Գ.-ին:

- Չգիտեմ, այնտեղ չէի, - պատասխանեց նա:

Սակայն երբեմն որոշ դիպուկ հարցեր բերում էին նոր և անսպասելի բացատրությունների:

Ջրույցներից մեկի ժամանակ ինչ-որ մեկը հարցրեց Գ.-ին արդյո՞ք գոյություն ունեցող կրոնների ուսմունքներում և ծիսակարգերում կա՞ որևէ իրական և նպատակային բան:

- Այո և ոչ, - ասեց Գ.-ն: Պատկերացրեք, մենք նստել և քննարկում ենք կրոնները, և սպասուհի Մաշան լսում է մեր զրույցը: Նա, իհարկե, ընկալում է դա յուրովի և այն ինչ հասկացել է հայտնում է դոնապան Իվանին: Դոնապան Իվանը նույնպես ընկալում է դա յուրովի և կրկնում հասկացածը իր հարևան կառապան Պետրոսին: Կառապան Պետրոսը գնում է գյուղ և այնտեղ պատմում է, թե ինչից են խոսում քաղաքի մանրակալվածք ազնվականները: Հավատո՞ւմ եք արդյո՞ք, որ այն ինչ նա է պատմում, արտացոլում է մեր ասածը: Հենց այսպիսի կապ է ստեծվել գոյություն ունեցող կրոնների և այն ամենի միջև, ինչ ընկած է դրանց հիմքում: Ուսմունքները, սովորույթները, աղոթքները, ծիսակարգերը դուք ստանում եք ոչ թե հինգերորդ, այլ քսանհինգերորդ ձեռքից, և իհարկե գրեթե ամեն ինչ անճանաչելիորեն խեղաթյուրված է, իսկ ամենաեականը՝ վաղուց մոռացված:

Օրինակ՝ Քրիստոնեության բոլոր դավանանքներում մեծ դեր է խաղում Քրիստոսի և նրա առաքյալների Վերջին Ընթրիքը: Պատարագներ, մի շարք դոգմաներ, ծիսակարգեր և խորհուրդներ դրա վրա են հիմնված: Դա եկեղեցիների բաժանության և պառակտման, աղանդերի ձևավորման համար հիմք է հանդիսացել: Որքան մարդ է զոհվել այն պատճառով, որ չի ընդունել դրա այս կամ այն մեկնաբանությունը: Սակայն իրականում ոչ ոք չի հասկանում, թե ինչ է իրականում տեղի ունեցել, թե Քրիստոսը և նրա աշակերտներն ինչ են արել այդ երեկո: Գոյություն չունի որևէ իրական բացատրություն, որ նույնիսկ մոտավոր կերպով կնամանվեր ճշմարտությանը, քանզի այն ինչ շարադրված է Ավետարաններում առաջին հերթին շատ է խեղաթյուրվել դրա արտագրության և թարգմանության ժամանակ, երկրորդը՝ այն գրվել է նրանց համար, *ովքեր գիտեն*: Այն մարդիկ ովքեր չգիտեն, այն որևիցե բան չի կարող բացատրել. որքան շատ փորձում են հասկանալ, այնքան ավելի շատ են մոլորության մեջ ընկնում:

Վերջին Ընթրիքին տեղի ունեցածը հասկանալու համար անհրաժեշտ է նախ և առաջ իմանալ որոշակի օրենքներ:

Հիշու՞մ էք, թե ինչ ասեցի «աստեղային մարմինի» վերաբերյալ: Եկեք համառոտ անդրադառնանք դրան: Մարդիկ ուլքեր ունեն «աստեղային մարմին» կարող են միմյանց հետ հաղորդակցվել տարածության վրա՝ չդիմելով հասարակ ֆիզիկական միջոցների: Սակայն նման հաղորդակցումը հնարավոր դարձնելու համար նրանք պետք է որոշակի «կապ» ստեղծեն իրար միջև: Այդ պատճառով էլ, տարբեր վայրեր կամ երկրներ այցելելիս՝ մարդիկ երբեմն իրենց հետ վերցնում են առարկաներ, որ պատկանում են մյուսին, և հատկապես առարկաներ, որոնք հպվել են վերջինիս մարմնին և հազեցված են նրա էմանացիայով, և այլն: Նույնկերպ մահացած մարդու հետ կապ պահպանելու համար նրա ընկերները պահպանում էին նրա հետ կապված առարկաներ: Այս առարկաներն իրենց էտնից կարծես հետք են թողնում՝ անտեսանելի լարեր կամ թելեր, որոնք ձգվում են տարածության մեջ: Տվյալ լարերը կապում են տվյալ առարկան կենդանի կամ որոշ դեպքերում մահացած անձի հետ: Մարդիկ այս մասին իմացել են հինավուրց ժամանակներից ի վեր և տարբեր ձևերով օգտագործել այս գիտելիքները:

Դրա հետքերը կարելի է գտնել մի շարք ժողովրդների սովորույթներում: Օրինակ՝ դուք գիտեք, որ որոշ ազգեր հետևում են արյունակից եղբայրության սովորույթին: Երկու մարդ կամ մի քանի մարդ խառնում են իրենց արյունը միևնույն բաժակի մեջ, այնուհետև խմում այն, որից հետո համարվում են *արյունակից եղբայրներ*: Սակայն այս ծիսակարգն ունի ավելի խորը արմատներ: Իր ծագումով այն մոզական ծիսակատարություն էր՝ «աստեղային մարմինների» միջև կապ ստեղծելու համար: Արյունը յուրահատուկ հատկություններ ունի: Եվ որոշ ժողովրդներ, օրինակ՝ հրեաները, արյանը մոզական առանձնահատկություններ էին վերագրում: Այսպիսով, տեսնում էք, որ եթե «աստեղային մարմինների» միջև կապ է հաստատվում, ապա որոշ ժողովրդների համոզմունքների համաձայն՝ այն չի խզվում մահից հետո:

Քրիստոսը գիտեր, որ պիտի մահանա: Այդպես էր որոշվել նախապես: Նա և իր աշակերտները գիտեին այդ մասին: Եվ նրանցից յուրաքանչյուրը գիտեր, թե ինչ դեր է խաղալու: Սակայն միևնույն ժամանակ նրանք ցանկանում էին Քրիստոսի հետ մշտական կապ պահպանել: Եվ այդ նպատակով Քրիստոսը նրանց տալիս է իր արյունը, որ խմեն և իր մարմինը, որ ուտեն: Դա բոլորովին հաց ու գինի չէր, այլ իսկական մարմին և արյուն:

Վերջին Ընթրիքը *մոզական ծիսակատարություն էր*՝ նման «արնակցական եղբայրության», որի նպատակն էր կապ հաստատել «աստեղային մարմինների» միջև: Սակայն կա՞րոյոք գոյություն ունեցող հավատքներին դավանող որևիցե մեկը, որ գիտի այս մասին, կա՞ որևէ մեկը, որ հասկանում է դրա նշանակությունը: Այս ամենը վաղուց մոռացվել է և ամեն ինչին այլ իմաստ է հաղորդվել: Բառերը մնացել են, սակայն դրանց իմաստը վաղուց կորել է:

Այս դասախոսությունը և հատկապես դրա ավարտը մեր խմբում շատ խոսակցությունների տեղիք տվեց: Շատերին Քրիստոսի և Վերջին Ընթրիքի մասին Գ.-ի ասածը նողկանք պատճառեց, իսկ մյուսները հակառակը՝ ճշմարտություն գտան

դրանում, ինչն, իրենց կարծիքով, երբևիցե հնարավոր չէր լինի ձեռք բերել
ինքնուրույն: